

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

**Խորհրդի անդամներ՝**

- Ա. Ղարիբյան                      ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
- Հ. Թովմայան                    ՀՀ արդարադատության նախարար
- Տ. Դավթյան                      ՀՀ Էկոնոմիկայի նախարար

**Մասնակիցներ՝**

- Դ. Սարգսյան                    ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Կ. Մինասյան                   ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Պ. Սաֆարյան                   ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
- Վ. Կտիկյան                    ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
- Ս. Տոնոյան                      ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
- Ա. Հարությունյան            ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Եղիազարյան              «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար
- Վ. Չիբուխչյան              «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
- Գ. Մայիլյան                    «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի բաժնի պետ
- Թ. Մինասյան                   «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի հասարակայնության հետ կապերի պատասխանատու

Հ. Մանուկյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն»  
ԾԻԳ-ի իրավաբան

**Հրավիրվածներ՝**

Վ. Հենյոն ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի դեսպանի տեղակալ

Տ. Սուքիասյան ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի ծրագրերի ազգային համակարգող

Ա. Հովակիմյան ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակ, օգնական

Է. Կարապետյան Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ֆինանսական և մասնավոր հատվածի մասնագետ, Մասնավոր և ֆինանսական հատվածի զարգացման դեպարտամենտ, Եվրոպա և Կենտրոնական Ասիա

Զ. Պարետչան ԱՄՆ-ի ՄՋԳ երևանյան գրասենյակի պետական/մասնավոր հատվածների միջև համագործակցության ապահովման մասնագետ

Ք. Փեյսն ԱՄՆ-ի ՄՋԳ տնտեսական զարգացման բաժնի տնօրեն

Ն. Գրդձելիդձե Ավստրիական զարգացման գործակալություն Հարավային Կովկասի ազգային ծրագրի պատասխանատու

Վ. Ռ. Պալեպու ՄԱԶԾ երևանյան գրասենյակի ծրագրի մասնագետ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչ, Հայաստան

Ա. Մանուկյան ԱՄՀ-ի մշտական ներկայացուցիչ Հայաստանում

Ա. Էմին թարգմանիչ

1. ՕԿԱԿ-ի կողմից իրականացվելիք Անցումային ծրագիրը հաստատելու մասին
- Աղյուսակ 1. Գույքագրման շրջափուլի Անցումային Ծրագիրը: Վերջնաժամկետ՝ 2013 թվականի մայիսի 8
  - Աղյուսակ 2. Անցում Ծրագրի լիարժեք գործառնական կարգավիճակին, 2013 թվականի մայիսի 8: Առաջին շրջափուլի վերանայումների աշխատանքներ

---

(Ա. Եղիազարյան, Հ. Թովմայան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել ՕԿԱԿ-ի կողմից իրականացվելիք անցումային միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը.

2) ՀՀ պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝

ա. 3-օրյա ժամկետում աշխատակազմերի ղեկավարների գլխավորությամբ ձևավորել աշխատանքային խմբեր (պատասխանատուներ)՝ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ» ՊՀ-ի հետ համագործակցելու համար,

բ. յուրաքանչյուրն իր մասով «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին ներկայացնել աշխատանքային խմբերի անդամների կոնտակտային տվյալները,

գ. մինչև 2013 թվականի ապրիլի 23-ը՝ լրացման հրահանգի համապատասխան՝ լրացված ստուգաթերթերը ներկայացնել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ» ՊՀ.

3) հանձնարարել ձևավորվելիք աշխատանքային խմբերին՝ աջակցել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպվելիք վերապատրաստումներին (2013 թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում)՝ մասնակցելով ստուգաթերթերի լրացմանը:

2. Գույքագրման ստուգաթերթը հաստատելու մասին

---

(Ա. Եղիազարյան, Հ. Թովմայան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանին՝ ՀՀ արդարադատության նախարար

Հ. Թովմասյանի հետ համատեղ մեկօրյա ժամկետում վերանայել Գույքագրման ստուգաթերթն ու և դրա լրացման հրահանգը և ըստ անհրաժեշտության խմբագրել այն.

2) հաստատել Գույքագրման ստուգաթերթի և դրա լրացման հրահանգի վերջնական խմբագրված և ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի հետ համաձայնեցված տարբերակը:

3. Իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը հաստատելու մասին

-----  
(Ա. Եղիազարյան, Հ. Թովմասյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել Իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը և դրա լրացման հրահանգը:

4. ՕԿԱԿ-ի կողմից իրականացվելիք միջոցառումների և հետագա քայլերի մասին

-----  
(Ա. Եղիազարյան, Կ. Մինասյան, Տ. Սուքիասյան, Վ. Ռ. Պալեպու, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն՝

1) «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանի հաղորդումն այն մասին, որ ՕԿԱԿ-ի կողմից իրականացվելիք միջոցառումների և հետագա քայլերի իրականացման համար՝

ա. կպահաջվի դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ ներգրավել 4 լրացուցիչ վարձու փորձագետ, որոնք Ծախսերի Ազդեցության Գնահատման մեթոդաբանությամբ կիրականացնեն «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կողմից առաջարկվող փոփոխությունների ֆինանսական ազդեցության հաշվարկը,

բ. ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությունը ծրագրի աշխատանքներին ավելի արդյունավետ դարձնելու նպատակով (ստուգաթերթերի լրացում, բիզնեսի կողմից կատարվող ծախսերի և այլ խնդիրների բացահայտում) կպահաջվի դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ ներգրավել 4 լրացուցիչ վարձու փորձագետ՝ առանցքային ոլորտների համար աշխատանքային խմբերի (focus group) ձևավորման, հարցազրույցների անցկացման և այլնի համար,

գ. ՄԱԶԾ-ի հետ համատեղ նախատեսվում է իրականացնել հանրային լուսաբանման (PR) նոր ծրագիր, որի համար կպահանջվի լրացուցիչ օժանդակություն,

դ. 2013 թվականի մայիս ամսին կազմակերպել մամուլի ասուլիս և ՋԼՄ-ների միջոցով հանրությանը ներկայացնել կատարված աշխատանքները.

2) որ Տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի հաջորդ նիստը կկայանա 2013 թվականի մայիսի 8-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ